



Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրասր Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Ֆ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.granthornton.am

«ԱԳԲԱ ԼԻՋԻՆԳ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և Խորհրդին.

Ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «ԱԳԲԱ ԼԻՋԻՆԳ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Կազմակերպություն) ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված Կազմակերպության 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից: Մենք այդ հաշվետվությունների վերաբերյալ 28 փետրվար 2014թ.-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական եզրակացություն:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Կազմակերպության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որտեղ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են միևնույն ձևով, ինչպես և աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների, որոնք չեն ներառվում այս ամփոփ ֆինանսական հաշվետվություններում: